ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԱՎՍՏՐԻԱ



IOM • OIM

IOM International Organization for Migration
Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)
Հայաստանյան առաքելություն

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ԱՎՍՏՐԻԱ

IOM • OIM

IOM International Organization for Migration
Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)
Հայաստանյան առաքելություն

ՄՄԿ

Սույն ուղեցույցը հրատարակվել է Իտալիայի Կառավարության ֆինանսավորմամբ:

© Հեղինակային իրավունքը պաշտպանված է: Սույն հրատարակության ոչ մի մաս չի կարող վերարտադրվել, պահպանվել որոնողական համակարգում կամ փոխանցվել էլեկտրոնային, մեխանիկական, պատճենահանման, ձայնագրման կամ այլ եղանակով առանց հրատարակչի նախնական գրավոր թույլատվության:

*****

Սույն հրատարակությունում արտահայտված կարծիքները կարող են չհամընկնել ՄՄԿ-ի կամ նրա անդամ-պետությունների պաշտոնական տեսակետների հետ:

*****

Հրատարակիչ՝ Միգրացիայի միջազգային կազմակերպություն

IOM International Organization for Migration
OIM Organisation Internationale pour les Migrations
OIM Organización Internacional para las Migraciones

Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)
Հայաստանյան առաքելություն
Հայաստան • Երևան 0010 • ՄԱԿ-ի գրասենյակ
• Պետրոս Ադամյան փողոց 14, 1-ին հարկ
Հեռ.՝ (+374 10) 58 56 92 • 58 37 86 • Հեռապատճեն՝ (+374 10) 54 33 65
• Էլ.փոստ՝ iom@arminco.com • http://www.iom.int/armenia

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր կանոններ՝ անկախ ներգաղթի կատեգորիայից 5
2. Երկիր մուտք գործելու ընդհանուր պայմանները և տեղեկություն վիզաների վերաբերյալ 8
3. Ներգաղթ աշխատանքի նպատակներով 14
4. Ներգաղթ ուսման նպատակով 21
5. Կացություն 25
6. Ապաստան 30
7. Ընտանիքի վերամիավորում 31
8. Առողջապահական համակարգ 34
9. Սոցիալական ապահովագրության համակարգ 35
10. Քաղաքացիության/հպատակության ձեռքբերում 39
Միգրանտներին աջակցություն տրամադրող կազմակերպություններ 43

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ԱՎՍՏՐԻԱ

1. Ընդհանուր կանոններ՝ անկախ ներգաղթի կատեգորիայից

Իրավասու մարմիններ

Եթե դիմումները ներկայացվում են Ավստրիայից դուրս գտնվող վայրերից, ապա դրանք ընդունելու համար պատասխանատու են արտերկրներում գտնվող Ավստրիայի իրավասու դիվանագիտական մարմինները: Նրանք իրավասու են մերժել դիմումները՝ հիմնվելով ոչ թե բովանդակային, այլ միայն ձևաչափերի հետ կապված հարցերի վրա:

Կացության թույլտվության դիմումների վերաբերյալ որոշումներ կայացնող իրավասու մարմինը վարչական տարածքի կառավարիչն է:

Ընթացակարգային քայլեր և պայմաններ

Ինչ վերաբերում է նոր ներգաղթածներին, ապա կացության բոլոր տեսակի իրավունքների համար պետք է դիմել արտերկրից՝ նախքան երկիր մտնելը:

Կացության իրավունքի շնորհումը օտարերկրացուն մերժվում է, եթե նրա նկատմամբ կիրառվել է կացության արգելք, ուժի մեջ է նրա նկատմամբ այլ ԵՏԳ անդամ երկրի կացության արգելքը, վերջին 12 ամիսների ընթացքում նրա նկատմամբ կիրարկվել է արտաքսման կարգադրություն, ակնհայտ է օտարերկրացու հետ շահադիտական ամուսնությունը կամ օտարերկրացու շահադիտական որդեգրումը, վերջացել է օտարերկրացուն թույլատրված առանց վիզայի մուտքի եվ կացության ժամկետը, կամ եթե վերջին 12 ամիսների ընթացքում նա օրենքով դատապարտվել է սահմանային հսկողությունից խուսափելու համար կամ անօրինական ճանապարհով ֆեդերալ տարածք մուտք գործելու համար:

Կացության իրավունք շնորհվում է օտարերկրացուն, եթե բավարարվում են հետևյալ պայմանները. օտարերկրացու կացությունը չի սպառնում

պետական շահերին, օտարերկրացին կարող է ներկայացնել Ավստրիայում ընդունված չափանիշներին համապատասխանող օթևանի օրինական իրավունքի ապացույց, օտարերկրացին ունի լրիվ ծածկույթով բժշկական ապահովագրություն ֆեդերալ տարածքում, օտարերկրացու կացությունը չի առաջացնի ֆինանսական բեռ տարածքային իշխանությունների համար և օտարերկրացու կացությունը չի վնասի Ավստրիայի հանրապետության ու այլ երկրի կամ միջազգային սուբյեկտի միջև հարաբերություններին:

Գործնականում բացասական որոշումների ամենակարևոր պատճառները ֆինանսական բավարար միջոցների կամ առողջության ապահովագրության բացակայությունն է և ենթադրությունը, որ օտարերկրացի հպատակը վտանգ է ներկայացնում հանրային կարգի կամ ազգային անվտանգության համար: Վերջին պատճառը ենթադրվում է, եթե օտարերկրացի հպատակը դատապարտվել է քրեական հանցանքների կամ որոշ դեպքերում՝ ապօրինի մուտքի և մնալու համար:

Վիզաների դեպքում սովորաբար առողջական հարցերի վերաբերյալ պահանջներ չեն ներկայացվում: Այնուամենայիվ, եթե օտարերկրացին եղել է այնպիսի վարչական տարածքում, որտեղ վերջին վեց ամիսների ընթացքում առկա է եղել վտանգավոր վարակ, ապա օտարերկրացի հպատակը պետք է ներկայացնի առողջության վերաբերյալ փաստաթուղթ: Կացության իրավունքների վճարներն են. 100 եվրո՝ սահմանափակ իրավունքների և 150 եվրո՝ անսահմանափակ իրավունքների համար:

Կացության իրավունքի համար դիմող օտարերկրացիներից պահանջվում է կատարել «ինտեգրման համաձայանագրի» դրույթները: Ինտեգրման համաձայնագիրը բաղկացած է երկու մոդուլներից. առաջինում շեշտվում է «կարդալու և գրելու ունակության ձեռքբերումը», իսկ երկրորդ մոդուլում շեշտվում է «գերմաներեն լեզվի իմացության ձեռքբերումը և Ավստրիայի սոցիալական, տնտեսական ու մշակութային կյանքին մասնակցնելու կարողությունը»: Վերջին քննությունը «հանձնված» համարվելու համար պահանջվում է կատարել ինտեգրման համաձայնագրի պարտավորությունը:

Ֆինանսական միջոցները կարող են փոխհատուցվել նվազագույնը հնգամյա ժամկետով վավերականություն և ընդարձակ բովանդակություն

ունեցող «պատասխանատվության հայտարարությամբ»: Խնդրո առարկա անձը պետք է վճարի հնարավոր բոլոր ֆինանսական վնասների համար, որոնց հետ կարող է առնչվել վարչական տարածքը՝ օտարերկրացու մնալու կապակցությամբ: Այս պատասխանատվությունը կապված չէ օտարերկրացու օրինական մնալու ժամանակահատվածի հետ, սակայն փոխարենը ունի նվազագույնը հնգամյա վավերականություն և այն կիրառվում է նաև, եթե թույլտվության ժամկետի ավարտից հետո օտարերկրացին ապօրինի կերպով է մնում Ավստրիայում:

Կացության թույլտվություններից շատերը կարող են շնորհվել միայն այն դեպքում, երբ չի գերազանցվում որոշակի չափաբաժինը: Այս չափաբաժինները ամեն տարի որոշվում են Ավստրիայի ֆեդերալ կառավարության կողմից՝ բնակության կանոնակարգերով, որոնցում նշվում է բնակության թույլտվությունների առավելագույն քանակը, որ կարող է շնորհվել հաջորդ տարվա ընթացքում: Այդ քանակը բաժանվում է ըստ կացության իրավունքների տարբեր տեսակների:

Եթե օտարերկրացին ցանկանում է փոխել կացության նպատակը Ավստրիայում մնալու ընթացքում, ապա նա պետք է անմիջապես տեղեկացնի այդ մասին իրավասու մարմնին: Կացության նպատակի փոփոխությունը ընդունելի կլինի, եթե օտարերկրացին բավարարի այն կացության իրավունքի պահանջները, որի համար նա դիմել է և, անհրաժեշտության դեպքում, առկա է պահանջվող չափաբաժնի տեղը:

Որոշումների բողոքարկումը և վարչական կամ իրավական հսկողությունը

Վարչական տարածքի կառավարչի (կամ լիազորված վարչական տարածքի իշխանությունների) կողմից ընդունված որոշումների բողոքարկումների վերաբերյալ որոշումը կայացնում է Ներքին գործերի ֆեդերալ նախարարը: Նման որոշումների դեպքում շահագրգիռ կողմերը ունեն արտահերթ դատական պաշտպանության միջոցների իրավունք՝ Վարչական դատարանում կամ Սահմանադրական դատարանում, որոնք պետք է չեղյալ հայտարարեն որոշումները, եթե դրանք կայացվել են ապօրինաբար կամ խախտվել են սահմանադրական իրավունքները: Համայնքի օրենքով կամ համաձայնագրերով արտոնություններ ունեցող երրորդ երկրի քաղաքացիների համար որպես երկրորդ ատյան, իրավասու են միայն անկախ վարչական սենատները (UVS): Այն

դեպքում, եթե դիմումները ներկայացվել են Ավստրիայի սահմաններից դուրս գտնվող վայրերում, ապա արտերկրում Ավստրիայի դիվանագիտական լիազոր մարմինը իրավասու է մերժել դիմումները՝ վերը հիշատակված ձևաչափի հետ կապված պատճառներով: Վարչական ատյաններին չի թույլատրվում ընդունել բողոքներ նման որոշումների դեմ, բայց դրանք կարող են, այնուամենայնիվ, կիրարկվել Վարչական դատարանի կամ Սահմանադրական դատարանի միջոցով:

2. Երկիր մուտք գործելու ընդհանուր պայմանները և տեղեկություն վիզաների վերաբերյալ

Եթե գալիս եք Ավստրիա, և Ձեր մնալու տևողությունը չի գերազանցելու վեց ամիսը, ամենայն հավանականությամբ Ձեզանից կպահանջվի երկիր մուտք գործելու թույլտվություն (վիզա) Ավստրիայի սահմանը հատելու համար:
Ընդհանրապես Ավստրիայում վավեր վիզայով գտնվելու ընթացքում չի թույլատրվում աշխատել: Սակայն, քանի որ վիզան ինքնին աշխատանքի թույլտվություն չէ, գոյություն ունեն հստակ սահմանված հանգամանքներ, որոնց առկայության դեպքում «D+C» տիպի այցելուի ճամփորդական վիզա ունեցողները կարող են ժամանակավորապես աշխատել Ավստրիայում (ուժի մեջ է 2006 թ. հունվարի 1-ից): Անձնագիրը պետք է վավեր լինի Ավստրիան (և Շենգեն գոտին) լքելու օրվանից հետո ևս երեք ամիս:

Լիազոր մարմիններ

Ավստրիայի դիվանագիտական և հյուպատոսական հիմնարկները արտերկրում հանդիսանում են վիզայի դիմումների վերաբերյալ որոշումներ կայացնող լիազոր մարմիններ: Սակայն բացառիկ դեպքերում որոշ սահմանային անցակետերի նույնպես իրավունք է տրված վիզա տրամադրելու: Նրանց գործողությունները վերագրվում են կամ շրջանային կառավարման մարմիններին կամ էլ, որոշ մեծ քաղաքներում, դաշնային ոստիկանության բաժանմունքներին, որոնք հանդես են գալիս որպես լիազոր մարմիններ:

Ընթացակարգային քայլեր, պայմաններ

Վիզա տրամադրելու հարցը կարգավորվում է Օտարերկրացի հպատակների հարցերով ոստիկանության օրենքով, որը իրավական հիմք է ապահովում «A» և «C» տիպի վիզաների (Շենգեն վիզա) համար, ի հավելումն հատուկ ավստրիական վիզաների («D» և «D+C» տիպի), որոնք տրամադրվում են մինչև վեց ամիս ժամկետով և թույլատրում են կարճաժամկետ աշխատանքային գործունեություն ծավալել: Որոշակի երկրների քաղաքացիներ ունեն հատուկ կարգավիճակ, քանի որ նրանց թույլատրվում է մեկնել Ավստրիա և մնալ այնտեղ կարճ ժամանակով առանց վիզայի:

Ընդհանուր առմամբ այդ օրենքում չկան առողջական հարցերի վերաբերյալ պահանջներ: «A» կամ «B» տիպի վիզայի վճարը 35 եվրո է, «C» տիպինը՝ 43 եվրո, իսկ «D+C» տիպինը՝ 75 եվրո (Հյուպատոսական հարկի մասին օրենք): «D+C» տիպի վիզան, որն ընդգրկում է աշխատաշուկային վերաբերող ծառայությունները, տրվում է հատուկ գործընթացով: Վիզայի դիմումի մասին որոշում կայացնելու ժամկետը վեց ամիս է, սակայն փաստացի գործընթացի տևողությունը կախված է տվյալ գործի բարդությունից: Ժամկետների մեծ տարբերություն կա նաև կախված դիմորդի քաղաքացիությունից և պատասխանատու դեսպանատնից:

Վիզայի մերժման հիմնավորումներից են պետական շահերի տեսանկյունից վտանգավոր համարվելը կամ էլ այլ Շենգեն երկրի կողմից մերժված լինելը, ինչը գրանցվում է Շենգեն տեղեկատվական համակարգում: Դիմումը կարող է մերժվել նաև այն դեպքում, երբ կասկած կա, որ երրորդ երկրի քաղաքացին կարող է մնալ Ավստրիայում վիզայի ժամկետը սպառվելուց հետո, կամ էլ եթե հիմքեր կան ենթադրելու, որ նա մտադիր է աշխատել Ավստրիայում (բացառությամբ գործնական այցելության կամ «D+C» տիպի վիզա ստանալու առիթի): Վիզայի դիմումը կարող է մերժվել նաև այն դեպքում, երբ օտարերկացին փորձի խաբեության դիմել իր ինքնության, քաղաքացիության կամ փաստաթղթերի հարցում:

Որոշումների բողոքարկումը և վարչական կամ իրավական հսկողությունը

Վիզայի ընթացակարգով ընդհանուր առմամբ դատական պաշտպանության միջոցի կիրառում չի թույլատրվում: Այնուհանդերձ մասնակից կողմերը կարող են կիրառել արտակարգ դատական պաշտպանության միջոց Վարչական Դատարանի կամ Սահմանադրական

դատարանի նկատմամբ, որոնք կարող են անվավեր ճանաչել որոշումը այն հիմնավորմամբ, որ այն կայացվել է ոչ իրավական հիմքերի վրա կամ էլ տեղի է ունեցել անհատի սահմանադրական իրավունքի խախտում: Հետևաբար պաշտոնական մարմինը պարտավոր է կայացնել նոր որոշում՝ ելնելով դատարանի կայացրած որոշումից:

Ովքեր պետք է ունենան մուտքի վիզա

Վիզա ունենալու անհրաժեշտությունը որոշվում է ըստ Ձեր քաղաքացիության և անձնագրի:

1. Ընդհանուր առմամբ ԵՄ/ԵՏԳ ոչ-անդամ երկրների քաղաքացիները (այսպես կոչված «երրորդ երկրի քաղաքացիները») պետք է ունենան թույլտվություն Ավստրիա մուտք գործելու և այնտեղ բնակվելու համար: Թուլտվության տեսակը կախված է Ավստրիայում մնալու նպատակից և տևողությունից.
    - **«D+C» տիպի վիզա** (առավելագույնը վեց ամիս տևողությամբ այցելության համար. այս տիպի վիզան չի կարելի երկարաձգել) կամ
    - **Կացության թույլտվություն** (“Aufenthaltsbewilligung”) «վարձատրվող զբաղվածության հատուկ դեպքերի» համար ("Sonderfälle unselbständiger Erwerbstätigkeit") կամ «գիտական հետազոտության» համար (ավելի քան վեց ամիս տևողությամբ այցելության համար):
2. Փախստականի անձնագիր կամ օտարերկրացի հպատակի անձնագիր ունեցողներից պահանջվում է վիզա՝ Ավստրիա մուտք գործելու համար:

Վիզայի տեսակները և ընթացակարգերը

(1) Օդանավակայանի տարանցիկ վիզա («A» տիպի) և Տարանցիկ վիզա («B» տիպի)

Եթե ուղևորվում եք որևէ ոչ-Շենգեն երկրից դեպի մեկ այլ ոչ-Շենգեն երկիր Ավստրիայի տարածքով և ազատված չեք վիզա ունենալու պարտավորությունից Վիզայի մերժման ծրագրի շրջանակներում, ապա Դուք պետք է դիմեք տարանցիկ վիզայի («B» տիպի) համար, եթե դուրս եք գալու օդանավակայանի տարանցիկ տարածքը և իրականում մուտք եք գործելու Ավստրիայի տարածք:

(2) Ճամփորդական վիզա («C» տիպի)

Եթե պատրաստվում եք մեկնել Ավստրիա զբոսաշրջության, ընկերներին այցելելու կամ գործնական նպատակներով 90 օրը չգերազանցող ժամանակահատվածով և եթե Ձեր երկիրը Վիզայի մերժման ծրագրի մասնակից չէ, ապա Դուք պետք է ձեռք բերեք Շենգեն **ճամփորդական վիզա («C» տիպի)**: Շենգեն վիզայով կարող եք ազատ երթևեկել Շենգեն գոտում:

Նկատի ունեցեք, որ ճամփորդական վիզայի համար Ավստրիական հյուպատոսություն դիմելու համար Ավստրիան պետք է լինի Ձեր **ուղևորության միակ վերջնակետը** (ուր մտադիր եք մնալ ամենաերկար ժամանակահատվածով): Եթե այդպես չէ, ապա Ավստրիան կհամարվի Շենգեն 1 գոտի **մուտք գործելու առաջին կետը**:

(3) Այցելուի վիզա («D» տիպի)

Եթե մտադիր եք Ավստրիայում մնալ 90 օրից ավելի, բայց 180 օրից պակաս՝ զբոսաշրջության, ընկերներին կամ ազգականներին այցելելու կամ գործնական նպատակներով և չեք հանդիսանում ԵՄ կամ ԱԱԵԱ (Ազատ առևտրի եվրոպական ասոցիացիա) անդամ երկրների քաղաքացի, ապա Դուք պետք է ձեռք բերեք Ավստրիական **այցելուի վիզա («D» տիպի):** Այս տիպի վիզան վավեր է միայն Ավստրիայի համար (սա Շենգեն վիզա չէ), սակայն այն թույլատրում է անցում Շենգեն տարածքներով՝ Ավստրիա հասնելու նպատակով:

(4) Այցելուի ճամփորդական վիզա («D+C» տիպի)

Սկսած 2006 թ. հունվարի 1-ից **Այցելուի ճամփորդական վիզայով («D+C» տիպի)** թույլատրվում է ժամանակավոր աշխատանք կատարել Ավստրիայում՝ հստակ բնորոշված հանգամանքներում (օրինակ՝ արվեստագետների կամ կատարողական արվեստի գործիչների կարճատև համաձայնագրերի շրջանակներում): Նկատի ունեցեք, որ ժամանակավոր աշխատանքը օրինական կերպով ստանձնելու համար Դուք **պետք է** ունենաք «D+C» տիպի վիզա, անգամ եթե իրավունք ունեք Ավստրիա մուտք գործել առանց վիզայի, և Ձեր մնալու ժամանակահատվածը չի գերազանցում երեք ամիսը: Այս տիպի վիզան իրավունք է վերապահում թե' Ավստրիայում մնալու մինչև վեց ամիս տևողությամբ և թե' ճամփորդելու Շենգեն երկրներով մինչև երեք ամիս տևողությամբ:

Դիմելու ընթացակարգը

Առաջին անգամ վիզայի համար դիմելիս փաստաթղթերը պետք է հանձնել համապատասխան Ավստրիական ներկայացուցչության մարմիններին (դեսպանատուն, գլխավոր հյուպատոսություն): Վիզայի համար կարելի է դիմել միայն արտասահմանից՝ նախքան Ավստրիա մեկնելը:

<u>Պահանջները և փաստաթղթերը</u>

1. Վավեր և ստորագրված անձնագիր կամ ճամփորդական փաստաթուղթ (Անձնագիրը/ճամփորդական փաստաթուղթը պետք է վավեր լինի առնվազն երեք ամիս՝ հաշված Շենգեն տարածքից դուրս գալու օրվանից: Անչափահաս երեխաների դեպքում պահանջվում է ծնողի կամ խնամողի համաձայնագիրը՝ հաստատված նոտարի կողմից:)
2. երկու օրինակ դիմումի ձև՝ լրացրած և ստորագրած,
3. երկու հատ լուսանկար (անձնագրի ձևաչափի, գունավոր, դեմուղիչ),
4. ուղևորության նպատակը վկայող ապացույցներ (օրինակ՝ ընդունելության տոմս և այլն),
5. կացարանի, ինչպես նաև բավարար միջոցների առկայության ապացույցներ (հյուրանոցի համարի պատվեր, եկամտի մասին տեղեկանք և այլն),
6. ապացույց Ճամփորդական կամ առողջության/դժբախտ պատահարի ապահովագրության, որն ապահովում է ծածկույթ աշխարհի բոլոր երկրներում և որում նշված է ապահովագրողի անունը, ծածկույթի տեսակը (բժշկական շտապ օգնության դեպքեր, այդ թվում նաև հայրենադարձումը) և ծածկույթի գումարի չափը՝ առնվազն 30 000 եվրո,
7. հայրենիքում ունեցած ընտանեկան և/կամ տնտեսական կապերի ապացույց (երաշխիք այն բանի, որ այցելուն ետ կգնա Ավստրիայից). օրինակ՝ ապացույցներ հայրենիքում ունեցած աշխատանքի, ուսման, ընտանեկան կապերի (ամուսնացած է, այրի է, ծնողներ և/կամ երեխաներ ունի, թե՝ ոչ) վերաբերյալ,
8. այն երկրների վիզաները, ուր մտադիր եք այցելել Ավստրիայում մնալուց հետո,
9. անձնական դիմում և **բոլոր** հիմնավորող փաստաթղթերից մեկական պատճենահանված օրինակ:

Լրացուցիչ պահանջներ

(1) **եթե ուղևորվում եք Ավստրիա որպես զբոսաշրջիկ, ապա անհրաժեշտ է.**

- հյուրանոցային համարի պատվերը հաստատող տեղեկանք,
- շրջագայությունը հաստատող տեղեկանք,
- բանկային հաշվի վերջին քաղվածքը՝ կնքված և ստորագրված Ձեր բանկի կողմից,
- տեղեկանքներ շարունակական աշխատանքի և եկամտի վերաբերյալ:

(2) **եթե այցելում եք ընկերների և ընտանիքի անդամների, ապա անհրաժեշտ է.**

- երաշխավորության/հրավերի նամակի նոտարով հաստատված բնօրինակը (Verpflichtungserklärung) http://www.bmeia.gv.at/fileadmin/user_upload/bmeia/media/Vertretungsbehoerden/Ottawa/1715_verpflerkl_dt.pdf
- Ավստրիայում հյուրընկալող ընտանիքի եկամտի ապացույցի կամ բանկային հաշվի քաղվածքի բնօրինակը,
- հյուրընկալողի հաշվառման փաստաթղթի պատճենը (Meldezettel)
- հյուրընկալողի վավեր անձնագրի պատճենը (լուսանկարի և վիզայի էջերը):

(3) **եթե գործնական ուղևորություն է, ապա անհրաժեշտ է.**

- Ձեր ընկերության կողմից տրված նամակի բնօրինակ, որով հիմնավորվում է Ձեր Ավստրիայում մնալը,
- հրավերի նամակի (Verpflichtungserklärung) բնօրինակը, պատշաճ ձևով ստորագրված Ավստրիական ընկերության ներկայացուցչի (տնօրենի կամ տեղակալի) կողմից: Նամակում պետք է նշված լինի, թե քանի անգամ եք մնալու Ավստրիայում և որքան ժամանակով (նշել օրերի քանակը, օրինակ՝ 20 օր). http://www.bmeia.gv.at/fileadmin/user_upload/bmeia/media/5-Buergerservice_Zentrale/62_verpflichtungserklaerung_firma.pdf
- Ավստրիական ընկերությունների պաշտոնական գրանցումներից (Auszug aus Firmenregister) քաղվածքի բնօրինակ՝ հաստատված նոտարով:

(4) **Եթե մասնակցում եք ուսանողական ծրագրերի (6 ամսից պակաս տևողությամբ), ապա** անհրաժեշտ է.

- նամակի բնօրինակ հաստատության կողմից,
- գրանցման ապացույցի բնօրինակը,
- բավարար ֆինանսական միջոցների առկայության ապացույցի բնօրինակ (օրինակ՝ կրթաթոշակ, դրամաշնորհի մասին նամակ, վերջին երկու ամիսների բանկային հաշվի քաղվածքները, [ծնողների բանկային հաշիվների քաղվածքներն ընդունելի են] այլ եկամտի աղբյուրների ապացույցներ,
- Ավստրիայում կացարանի առկայության ապացույց (օրինակ՝ վարձակալության պայմանագիր, սեփականության վկայական):

3. Ներգաղթ աշխատանքի նպատակներով

Օտարերկրացի աշխատողների երկիր մուտք գործելու և մնալու պայմանները

ԵՄ ոչ-անդամ երկրների քաղաքացիների համար Ավստրիայում օրինական կերպով վարձատրվող աշխատանք ստանձնելու համար անհրաժեշտ է վավեր բնակության թույլտվություն (Niederlassungsbewilligung) կամ ժամանակավոր կացության թույլտվություն (Aufenthaltserlaubnis):

«Օտարերկրացի հպատակների զբաղվածության մասին» օրենքի համաձայն (Ausländerbeschäftigungsgesetz) զբաղվածության թույլտվություն է պահանջվում նաև այն դեպքում, երբ օտարերկրացի աշխատողը պետք է աշխատի Ավստրիայում որպես օտարերկրյա ընկերության աշխատակից: Կարգավորման այս միջոցը նպատակ է հետապնդում ապահովել առաջարկի և պահանջարկի միջև հավասարակշռված հարաբերություն Ավստրիայի աշխատաշուկայում:

Աշխատանքի թույլտվությունը տրվում է աշխատանքի հարցերով զբաղվող մարմինների կողմից: Այն չի թույլատրում թեկնածուին ճամփորդել Ավստրիա կամ բնակվել այնտեղ: Աշխատանքի թույլտվության հաստատումից հետո նոր թեկնածուն կարող է դիմել կացության թույլտվության («D» տիպի)համար:

Ի գիտություն.
Շենգեն վիզա («C» տիպի) ունենալը բավարար չէ (աշխատանքի թույլտվություն պահանջող) զբաղվածություն ստանձնելու համար:

Օտարերկրյա քաղաքացիների զբաղվածությունը
Հիմնական պահանջները
1. Վեցամսա ժամանակահատվածում ընդհանուր գումարով 90 օրը գերազանցող գործնական այցելության համար պահանջվում է աշխատանքի թույլտվություն:
2. Զբաղվածության գործունեություն ծավալելու համար պահանջվում է աշխատանքի թույլտվություն: Ներգաղթելու առումով զբաղվածության գործունեություն է համարվում.
   ա. այն գործունեությունը, որից առաջին հերթին շահում է ավստրիացի գործատուն,
   բ. ավստրիացի գործատուի և օտարերկրյա քաղաքացու միջև ձևավորված այն հարաբերությունը, որի դեպքում օտարերկրացին աշխատում է ավստրիական ընկերության ենթակայության տակ,
   գ. օտարերկրացին վարձատրվում է ավստրիական ընկերության աշխատավարձային ցուցակով/ֆոնդից,
   դ. օտարերկրացին ավստրիական ընկերության կողմից ընդունված է աշխատանքի (օրինակ՝ գրասենյակ, այցետոմս, կանոնավոր աշխատաժամեր):

Ընթացակարգի ընդհանուր դրույթները
Ավստրիայում աշխատելու նպատակով Աշխատանքի լիազորություն ստանալու համար օտարերկրացին պետք է ձեռք բերի հետևյալ երեք փաստաթղթերը՝
1. երաշխավորության վկայական,
2. կացության թույլտվություն,
3. աշխատանքի թույլտվություն:

Ի գիտություն՝
- Այն աշխատողները, ովքեր մինչև վեց ամիս տևողությամբ ծրագրի շրջանակներում աշխատելու են Ավստրիայում երեք ամիսը չգերազանցող ժամանակահատվածով, պարտավոր են ձեռք բերել "Entsendebewilligung" կոչվող հատուկ տիպի թույլտվություն: Կացության թույլտվություն հարկավոր չէ:

- Օտարերկրացին **չի կարող փոխել** իր կարգավիճակը զբաղվածության հիմնավորմամբ թույլտվության, քանի դեռ գտնվում է Ավստրիայում:

(1) Երաշխավորության վկայական

Աշխատանքի թույլտվության դիմումի ընթացքը խթանելու համար ավստրիական կողմի գործատուն պետք է ձեռք բերի Երաշխավորության վկայական ("Sicherungsbescheinigung") տեղի Զբաղվածության գրասենյակից ("Arbeitsmarktservice"), որը օրենքով լիազորված է նախատեսված աշխատավայրերի հարցերում: Ավստրիական կողմի գործատուն պետք է հանձնի հետևյալ փաստաթղթերը՝

- դիմումի ձևաթերթ,
- գործատուի կողմից նամակ, որում մանրամասնեցված են ավստրիական կազմակերպության բնույթը, հանձնարարվող աշխատանքը, աշխատանքային պարտականությունները, աշխատողի որակավորումները և սահմանված վարձատրությունը,
- հիմնավորում օտարերկրացի աշխատողին աշխատանքի ընդունելու անհրաժեշտության վերաբերյալ (մասնագիտական հատուկ որակներ, տեխնիկական հմտություններ և այլն),
- աշխատողի կրթական աստիճանի վկայականների պատճենները,
- աշխատողի մանրամասն աշխատանքային կենսագրությունը/CV:

Ի գիտություն.

Աշխատանքային թույլտվության դիմումը ստորագրել տալուց և ավտրիական կողմի գործատուի փաստաթղթերը հանձնելուց հետո միայն կարելի է դիմումը ներկայացնել Ավստրիայի պաշտոնական մարմիններին: Դիմումի փաստաթղթերի/տվյալների մշակման տևողությունը առնվազն 6-8 ամիս է:

(2) Զբաղվածության թույլտվություն

Զբաղվածության թույլտվությունը (Beschäftigungsbewilligung) տրվում է ապագա գործատուի ներկայացրած դիմումով նախատեսված անհատ օտարերկրացիներին: Զբաղվածության թույլտվությունը իրավունք է վերապահում օտարերկրացուն օրինական հիմունքներով կատարելու վարձատրվող աշխատանք Ավստրիայում՝ հստակորեն նշված կոնկրետ աշխատավայրում:

(3) Աշխատանքի թույլտվություն
Զբաղվածության թույլտվությունով օրինական կերպով 52 շաբաթ աշխատելուց հետո օտարերկրացին կարող է դիմել աշխատանքի թույլտվության (Arbeitserlaubnis) համար:
Այս տիպի թույլտվությունը հնարավոր չէ փոխանցել մեկ ուրիշի և տրվում է որոշակի վարչական տարածքների համար՝ թույլատրելով աշխատողին ընտրել աշխատանքի տեսակը և գործատուին: Գործատուն միայն պարտավոր է զեկուցել համապատասխան Պետական զբաղվածության ծառայություն **(AMS)**՝ աշխատանքն սկսելու և ավարտելու ժամկետների (ինչպես նաև հիմնական աշխատավարձի և աշխատանքային պայմանների) մասին:

Ի գիտություն.
Աշխատանքի թույլտվության դիմումի հաստատումից հետո թեկնածուն պետք է իր բնակության երկրից ներկայացնի կացության վիզայի դիմում: Ամենայն հավանականությամբ վիզա տրամադրելու համար կպահանջվի դիմորդի ոստիկանության կողմից տրված թույլտվությունը և իր ծննդյան վկայականի բնօրինակը, հետևաբար խորհուրդ է տրվում այս փաստաթղթերը նախապես պատրաստել:

Ի գիտություն.
Ավստրիական աշխատանքի թույլտվությունը ընդհանուր առմամբ **վավեր է մեկ տարի նախնական ժամանակահատվածով** և որոշ դեպքերում՝ երկու տարով: Տարեկան ժամկետները կարելի է երկարաձգել:
Բոլոր օտարերկրյա քաղաքացիները Ավստրիայում բնակվելու համար պետք է գրանցեն իրենց անուն-ազգանունը և հասցեն տեղի Հաշվառման գրասենյակում ժամանումից հետո երեք օրվա ընթացքում:

(4) Ազատման վկայական
Այն օտարերկրացիները, ովքեր ստացել են Ազատման վկայական (Befreiungsschein), գտնվում են ավստրիացի աշխատողներին համարժեք կարգավիճակում:
Ազատման վկայականի համար դիմելիս հարկավոր է հետևյալը՝

- առնվազն հինգ տարվա գրանցված աշխատանքային ստաժ վերջին ութ տարիների ընթացքում,

- Ավստրիայում պարտադիր հանրակրթական դպրոցի վերջին դասարանի ամբողջական ծրագրի ավարտական վկայական, պայմանով որ տվյալ անձը ունենա մշտական բնակության թույլտվություն (Niederlassungsbewilligung), և իր ծնողներից մեկը օրինական կերպով ապրած և աշխատած լինի Ավստրիայում երեք տարի վերջին հինգ տարիների ընթացքում,
- Այն օտարերկրացիները, ովքեր ամուսնացած են ավստրիացու հետ առնվազն հինգ տարի (օտարերկրացիների զբաղվածությունը կարգավորող օրենքը (AuslBG) չի տարածվում ամուսնացած օտարերկրացիների վրա): Մահվան դեպքում ամուսինները/կանայք կարող են դիմել ազատման վկայական ստանալու համար: Ավստրիայում բնակվելը անհրաժեշտ պահանջ է:
- Այն օտարերկրացիները, ովքեր բավարարում են Ազատման վկայականի պահանջները որպես երիտասարդ/անչափահաս տարիքի անձինք, կամ այն պատճառով, որ ԵՏԳ քաղաքացիությամբ մեկ կամ մյուս ծնողի վրա չի տարածվում AuslBG օրենքը, պայմանով որ նրանք օրինական հիմունքներով ապրած լինեն Ավստրիայում առնվազն երկուսուկես տարի վերջին հինգ տարիների ընթացքում:

Ի գիտություն.
Ազատման վկայականը փոխանցելի թույլտվություն չէ և ունի հինգ տարվա վավերականություն ողջ Ավստրիայի համար: Այս տիպի վկայական ունեցողը իրավունք ունի ընտրելու իր աշխատանքի բնույթը,գործատուին և աշխատավայրը երկրի ցանկացած մասում: Գործատուն պարտավոր է զեկուցել աշխատանքն սկսելու և ավարտելու ժամկետների մասին: Կարիք չկա, որ գործատուն դիմի զբաղվածության թույլտվության համար: Ազատման վկայականները հատկացվում են աշխատաշուկայի հարցերով զբաղվող համապատասխան շրջանային ծառայությունների կողմից:

Աշխատաշուկայի պահանջարկ ունեցող հատվածները
- առողջապահություն, օր.՝ բուժքույրական խնամք տնային պայմաններում,
- սոցիալական աշխատանք,
- շինարարություն,
- արդյունաբերություն և ապրանքարտադրություն, օր.՝ մետաղական կառույցներ և մասեր,

- արդյունաբերական մաքրություն,
- գյուղատնտեսություն և այգեգործություն,
- տուրիզմ,
- բարձր որակավորմամբ աշխատողներ՝ ֆինանսական և տեխնոլոգիական բնագավառներում:

Քվոտաների համակարգը և երկկողմ աշխատանքային համաձայանագրերը

Ավստրիական վերին սահմանի համակարգը

Ավստրիայում աշխատելու թույլտվություն ստացող օտարերկրացիների քանակը կարգավորվում է վերին սահմանի համակարգով (ֆեդերալ և նահանգային մակարդակներում վերին սահմանը ապահովում է օտարերկրյա աշխատողների մուտքի հսկողությունը):

Այս համակարգով սահմանվում է, որ (ներկայումս) **զբաղվածություն ունեցող, ինչպես նաև զբաղվածություն չունեցող օտարերկրյա քաղաքացիների ընդհանուր թիվը չպետք է լինի ավելին, քան Ավստրիայի աշխատուժի 8 տոկոսը:** Բոլոր օտարերկրյա քաղաքացիները, ովքեր զբաղվածության թույլտվության, կարճաժամկետ կամ երկարաժամկետ աշխատանքի թույլտվության շրջանակներում ունեն զբաղվածություն, ընդգրկվում են այս քվոտայի սահմաններում: Եթե այս քվոտան գերազանցվի, ապա միայն առանձնահատուկ խմբերի կարող են շնորհվել նախնական զբաղվածության թույլտվություններ և զբաղվածության թույլտվություններ այն դեպքերում, երբ դա բխի հասարակության և համընդհանուր էկոնոմիկայի շահերից. այդ թիվը կարող է կազմել առավելագույնը 9 տոկոս: Ավստրիական աշխատաշուկան մնում է մատչելի հետևյալ անձանց համար.

- երիտասարդ օտարերկրացիներ, ովքեր ունեն ավստրիական հանրակրթական դպրոցի ավարտական վկայական, նաև եթե ծնողներից մեկը աշխատում է Ավստրիայում,
- պատերազմի փախստականներ՝ օտարերկրյա քաղաքացիների հարցերը կարգավորող օրենքի շրջանակներում,
- կառավարիչներ և հատկապես բարձր որակավորմամբ մասնագետներ (հատկապես եթե նրանց զբաղվածությունը Ավստրիայում ուղեկցվում է կապիտալի փոխանցումներով և Ավստրիայում նոր մասնաճյուղեր բացելով),

- օտարերկրացիներ, ում մուտքը ավստրիական աշխատաշուկա նախատեսված է երկկողմ համաձայնագրերով,
- սահմանամերձ բնակավայրերից երթևեկող աշխատողներ, ովքեր նախորդ տարվա ընթացքում առնվազն վեց ամիս աշխատել են միևնույն գործատուի համար,
- սահմանափակ սեզոնային թույլտվություններ գյուղատնտեսության, անտառաբուծության և տուրիզմի ոլորտներում աշխատելու համար,
- Ավստրիայում գտնվող օտարերկրյա գործատուի աշխատողներ,
- ինտեգրված օտարերկրյա քաղաքացիներ, ովքեր ապրում են Ավստրիայում առնվազն 8 տարի:

<u>Ներգաղթի քվոտաներ</u>

Ըստ պաշտոնական տեսակետի Ավստրիայում ներգաղթի կարգավորման հիմնական գործիքը ներգաղթի քվոտան է: Այն պարունակում է հետևյալը.

- ենթաքվոտա երրորդ երկրի քաղաքացիների ընտանիքի վերամիավորման դեպքերի համար.
- աշխատանքային միգրացիայի վրա սահմանված քվոտայի միայն նվազագույն մասը, որը հատկացվում է բարձր որակավորմամբ աշխատողներին,
- հավելյալ քվոտաներ ժամանակավոր միգրացիայի համար (մի քանի շաբաթից մինչև վեց ամիս ժամկետով) - Վեցամսյա թույլտվությունների առավելագույն քանակը տարեկան 8000 է, իսկ վեցշաբաթյա (սովորաբար բերքահավաք բանվորների համար) թույլտվություններինը՝ 7000:

<u>Հատուկ սահմանափակումներ և պայմաններ ըստ բնագավառների</u>

- որակավորում ունեցող կադրեր
  Աշխատանքային ներգաղթը սահմանված է «որակավորում ունեցող մասնագետներ»-ի համար, և գոյություն ունեն հատուկ պայմաններ առողջապահության բնագավառի համար: Այլ մասնագետներին տրվում է միայն ժամանակավոր զբաղվածության հնարավորություն:
- առողջապահության բնագավառի կադրեր
  Նահանգային կառավարությունների (որոնք կառավարում են հիվանդանոցների մեծ մասը և կրում են քաղաքական պատասխանատվություն խնամք իրականացնող հաստատությունների նկատմամբ) կողմից գործադրվող ճնշման

հետևանքով 2004 թ. «նոր» անդամ պետություններից եկող առողջապահության և խնամքի մասնագետների համար այս շեմը իջեցվեց 40 տոկոսի, քանի որ վերապատրաստված բուժքույրերն, օրինակ սկսում են իրենց աշխատանքային գործունեությունը համեմատաբար ցածր աշխատավարձերով:

- սեզոնային զբաղվածություն
  Գոյություն ունեն հատուկ պայմաններ և հատուկ քվոտաներ «սեզոնային» զբաղվածության համար, որը բնութագրվում է որպես մինչև վեց ամիս տևողությամբ զբաղվածություն (հնարավոր է նորացնել մեկ անգամ՝ երկու ամսվա բացակայությունից հետո): Այս տիպի զբաղվածության համար սահմանափակումներ չկան՝ մասնագիտության, բնագավառի, եկամտի կամ որակավորման առումով:
  Այնուհետև գոյություն ունեն **հարևան «նոր» անդամ պետությունների հետ կնքված երկկողմ համաձայնագրեր՝** երթևեկող աշխատողների և վերապատրաստման նպատակով ժամանակավոր զբաղվածության համար:

4. Ներգաղթ ուսման նպատակով

Ուսումնական հաստատության ընդունելության դիմում

Համալսարանում գրանցված լինելը անհրաժեշտ նախապայման է ուսանողական կացության թույլտվության համար դիմելիս: Երրորդ երկրների քաղաքացիներին հատկացվում է կացության թույլտվություն այն դեպքերում, եթե նրանք շարքային պետական հանրակրթական, մասնավոր, պետական դպրոցի կարգավիճակով օրինական հիմունքներով գործող դպրոցի աշակերտներ են, կամ էլ՝ հավատարմագրված ոչ-կրթական հաստատության սաներ:

Մինչև 24 տարեկան ուսանողները պետք է ունենան 4274 եվրո յուրաքանչյուր ուսումնական տարվա համար, իսկ 24-ից բարձր տարիքի ուսանողները՝ 8280 եվրո: Այս գումարի որոշ մասը հնարավոր է վաստակել աշխատելով, սակայն դրա համար պահանջվում է ունենալ աշխատանքի թույլտվություն՝ տրված Աշխատանքի շուկայի ծառայության կողմից: Իրականում քվոտաների համակարգի պատճառով նման թույլտվություն ստանալը շատ դժվար է: Աշխատանքային գործունեությունը չպետք է շեղի հիմնական նպատակից, որը ուսում

ստանալն է: Սրա մեկնաբանությունն այն է, որ ուսանողը պետք է իր ժամանակի մեծ մասը տրամադրի ուսմանը և իրավունք ունի աշխատել միայն կես հաստիքով: Այնուհանդերձ վաստակած գումարի չափը չի սահմանափակվում: Պարտավորության հայտարարությունը, որպես բացակայող ֆինանսական գումարների փոխհատուցման այլընտրանք, ընդունելի եղանակ է:
Ուսանողի կացության թույլտվությունը կարող է տրվել առավելագույնը մեկ տարով: Ուսման նպատակով կացության թույլտվությունը նորացնելը ընդունելի է միայն այն դեպքում, երբ երրորդ երկրի քաղաքացին ներկայացնում է ուսման առաջադիմության վկայություն:
Դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը պետք է ուղարկել ուղիղ համալսարան, կիրառական գիտությունների համալսարան կամ որևէ այլ կրթական աստիճան շնորհող ծրագիր ունեցող հաստատություն (Ավստրիական ներկայացուցչություններին հանձնած դիմումները այնտեղից փոխանցվում են տվյալ կրթական հաստատություն: Դիմումները պետք է ժամանակին հասնեն համալսարան, ուստի նկատի ունեցեք, որ փոխանցելը կարող է որոշ ժամանակ տևել, և նման դեպքում չպետք է ակնկալել դիմումների ընդունելության վերջնաժամկետի երկարաձգում): Որոշ համալսարաններ առաջարկում են «տվյալների նախնական գրանցում» համացանցի միջոցով և այնուհետև հատուկ տեղեկություններ են ուղարկում դիմորդին էլեկտրոնային փոստով:

<u>Ավստրիական համալսարանների ընդունելության պահանջները</u>
Օտարերկրյա քաղաքացին (կամ քաղաքացիություն չունեցող անձը) կարող է ընդունվել ավստրիական համալսարանի աստիճան շնորհող ծրագիր որպես սովորական ավստրիացի ուսանող, եթե.

- համալսարանը ունի թափուր տեղ տվյալ ուսումնական ծրագրում,
- դիմորդը ունի «A» մակարդակի դիպլոմ կամ էլ ավագ դպրոցի դիպլոմ, որը համարժեք է ավստրիական «Matura» քննության վկայականին, կամ կարող է ներկայացնել առնվազն երեք տարվա կրթության վկայական՝ տրված որևէ այլ հետդպրոցական կրթական հաստատության կողմից,
- Հավաստագրումը պետք է բավարար լինի տվյալ ծրագրի ընդունելության համար այն երկրի համալսարանում, որտեղ այն ձեռք է բերվել: Ուսմանն առնչվող բոլոր պահանջները (ընդունելության քննություն) պետք է բավարարված լինեն այն

երկրում, որտեղ տրվել է «A» մակարդակի կամ ավագ դպրոցի դիպլոմը:

- Եթե Ավստրիայի համար ընտրված ուսումնական ծրագիրը չկա ուսանողի երկրի համալսարաններում, ապա պետք է ներկայացվի մեկ այլ հարակից ծրագրի վկայական: Միայն այն դեպքում, երբ հայրենի երկրում չկա համալսարան, այն չի պահանջվում:
- Ի հավելումն այս ամենի ուսանողը պետք է ունենա գերմաներենի բավարար իմացություն: Անհրաժեշտության դեպքում պետք է հանձնել քննություն:

<u>Անհրաժեշտ փաստաթղթեր</u>

- անձնագիր, անձը հաստատող քարտ կամ քաղաքացիության ապացույց՝ անձը հաստատող լուսանկարով պաշտոնական փաստաթղթի հետ մեկտեղ,
- համալսարանի ընդունելության ընդհանուր որակավորում՝ «A» մակարդակի, ավագ դպրոցի ավարտական կամ համարժեք վկայական, ուսումնառության վերջին տարվա առարկաների և գնահատականների քաղվածքը,
- համալսարանի ընդունելության առանձնահատուկ որակավորում՝ ընտրված մասնագիտությունը տվյալ համալսարանում սովորելու համար ուղիղ համալսարան դիմելու իրավունք՝ տրված այն երկրում, որտեղ ձեռք է բերել այդ որակավորումը,
- գերմաներենի իմացության ապացույց, օրինակ՝ գերմաներենի առկայությունը դպրոցի ավարտական վկայականի մեջ, լեզվի դասընթացների դիպլոմ,
- զանազան լրացրած ձևաթղթեր (տրվում են համապատասխան համալսարանների ուսանողների գրանցման բաժնում)
    - ընդունելության դիմում,
    - գրանցման թերթիկ,
    - վիճակագրության ձևաթերթ,
    - ուսանողի անձը հաստատող լուսանկարով փաստաթուղթ,
    - ուսումը շարունակելու համար ձևաթերթ,
- երկրորդ լուսանկարը,
- կիսամյակի կտրվածքով ուսման վարձի վճարման անդորրագիր բանկից, եթե դիմորդը որևէ հիմնավորմամբ չի ազատվել ուսման վարձավճարից:

Ի գիտություն՝
Բոլոր փաստաթղթերը պետք է լինեն բնօրինակ և գերմաներեն թարգմանությամբ՝ պաշտոնապես հաստատագրված ծագման երկրում, որից հետո՝ հաստատագրված նույն երկրի Ավստրիական դեսպանատան կողմից: Դեսպանատան կողմից հաստատագրումը անհրաժեշտ չէ, եթե Ավստրիան, համատեղ համաձայնագրերի շրջանակներում, ճանաչում է տվյալ երկրի պաշտոնական հաստատագրումը: Խնդրում ենք տեղեկանալ համապատասխան համալսարանում վերջնական հաստատագրման անհրաժեշտության մասին:

Մագիստրատական և ասպիրանտական կրթաթոշակներ
Ավստրիական կազմակերպությունների կողմից առաջարկվում են զանազան կրթաթոշակային ծրագրեր:

<u>Միակողմ կրթաթոշակային ծրագրեր</u>
Մի շարք միակողմ կրթաթոշակ ապահովող ծրագրերի միջոցով Ավստրիայի Հանրապետությունը հնարավորություն է ընձեռնում օտարերկրացի ուսանողներին, բուհ ավարտածներին կամ պրոֆեսորներին սովորելու ավստրիական համալսարաններում: Նման ծրագրերից կարևորագույներն են. **Österreich-Stipendium՝** Ավստրիական կրթաթոշակ (բուհ ավարտածների համար), **Ernst Mach-Stipendium՝** Էռնստ Մախի կրթաթոշակ (բուհ ավարտածների համար՝ բոլոր ոլորտներից, բացի արվեստից), **Franz Werfel-Stipendium՝** Ֆրանց Վերֆելի կրթաթոշակ (այն համալսարանական դասախոսների համար, ովքեր մասնագիտացված ուսումնասիրություն են կատարում գրադարաններում, արխիվներում, հետազոտական հաստատություններում ավստրիական գրականության վերաբերյալ), **North- South-Dialogue Scholarship՝** Հյուսիս-հարավ երկխոսության կրթաթոշակ (բնական գիտությունների, ճարտարագիտության, հասարակական գիտությունների և տնտեսագիտության ոլորտներում մագիստրոսի աստիճան ունեցողների կամ էլ դոկտորական ուսումնասիրությունների համար):

<u>Էռնստ Մախի դրամաշնորհ՝ օտարերկրյա ուսանողների համար</u>
Նախատեսված է ոչ-եվրոպական երկրների այն ուսանողների համար, ովքեր ցանկանում են սովորել Ավստրիայի կիրառական գիտությունների

համալսարանի (Fachhochschule) մագիստրատուրայում (լրիվ ծանրաբեռնվածությամբ/ ստացիոնար):

Ծրագրին կարող են հավակնել այն ուսանողները, ովքեր սովորում են ոչ-եվրոպական երկրի համալսարանի մագիստրատուրայում կամ էլ՝ հաջողությամբ են ավարտել ավանդական դիպլոմի կրթության առնվազն վեց կիսամյակների ծրագրերը դրամաշնորհին դիմելու ժամանակ:
Դիմումը ներկայացնել www.schoolarships.at վեբկայքի միջոցով:
Համատեղ կրթական ծրագրեր
Համալսարաններն ունենում են ֆոնդեր Համատեղ կրթական ծրագրերի, համալսարանների միջև գործընկերության և արտասահմանում կարճատև ուսման դրամաշնորհների համար, որ բաշխվում են ըստ իրենց հայեցողության:
Այս տիպի, ինչպես նաև այլ կրթաթոշակների համար այցելեք Ավստրիական փոխանակման ծառայության կողմից հսկվող կրթաթոշակների վերաբերյալ տվյալների ինտերակտիվ բազան (GRANTS)՝ տեղակայված www.grants.at կայքում:

Ի գիտություն.
Դրամաշնորհների և կրթաթոշակների ծրագրերից մեծ մասով չի թույլատրվում կատարել վարձատրվող աշխատանք:

5. Կացություն

Վարձատրվող աշխատանք ստանալու նպատակով

Գործող օրենսդրությամբ սովորաբար շատ դժվար է ներգաղթել Ավստրիա պարզապես աշխատանքի նպատակով: Կացության իրավունքի համար իրավունք ունեն դիմել միայն «առանցքային աշխատողները», ինչպես նշված է «Օտարերկրացի հպատակների զբաղվածության մասին» օրենքում: Ուստի, անհրաժեշտ են հատուկ որակավորումները և բարձր եկամուտը: «Առանցքային աշխատողներ»-ի հայեցակարգը, բացի սեզոնային աշխատանքի վերաբերյալ դրույթներից, չի սահմանափակվում Ավստրիայի տնտեսության կոնկրետ ոլորտներով: Աշխատուժի շուկա ազատ մուտք ունեն միայն «ԵՄ երկարաժամկետ կացության թույլտվություն» կամ «առանց սահմանափակումների կացության թույլտվություն» ունեցող օտարերկրացիները:

Ավստրիայում աշխատելու մտադրություն ունեցող օտարերկրացիներին անհրաժեշտ է հատուկ տեսակի կացության իրավունք, որում ընդգրկված են բոլոր նպատակները («առանց սահմանափակումների բնակության թույլտվություն»): Երրորդ երկրի և ԵՄ «ամենանոր» անդամ երկրների քաղաքացիներից շատերի աշխատանքային գործունեության համար պահանջվում է գործատուին ներկայացնել լրացուցիչ աշխատանքի թույլտվություն: Օրինական աշխատանքից որոշ ժամանակ անց օտարերկրացին իրավունք ունի դիմել աշխատանքային նպաստի կամ բացառության քարտի համար, որը նրան թույլ է տալիս ազատորեն մուտք ունենալ տվյալ նահանգի կամ ողջ ֆեդերալ տարածքի աշխատուժի շուկա: Աշխատանքի թույլտվության շնորհումը սահմանափակված է քվոտայի համակարգով: Աշխատանք ունեցող և աշխատանք չունեցող օտարերկրացիների թիվը, սկզբունքորեն, չպետք է գերազանցի Ավստրիայի աշխատող և չաշխատող քաղաքացիների ութ տկոսը: Աշխատանքի թույլտվության վավերականությունը չի կարող գերազանցել մեկ տարին: Աշխատանքային նպաստը վավերական է մինչև երկու տարի, իսկ բացառության քարտը՝ մինչև հինգ տարի. երկուսն էլ կարող են նորացվել:

Կացության թույլտվության շնորհելու համար առանձնահատուկ նպատակ է հանդիսանում <u>ինքնազբաղվածությունը:</u> Աշխատողների համար ավելի սահմանափակող կանոնակարգերի զանցառումներից խուսափելու համար Աշխատուժի շուկայի ծառայության (օտարերկրացիների զբաղվածության հարցերով լիազոր մարմին) ներգրավվմամբ իրականացվում է հատուկ ընթացակարգ, եթե հիմնավոր կասկածներ կան՝ կապված ինքնազբաղվածության գործունեության պատճառով մնալու հետ: «ԵՄ երկարաժամկետ կացության թույլտվություն» ունեցող երրորդ երկրի քաղաքացիներին կարող են շնորհվել 12 ամիս վավերականություն ունեցող «սահմանափակումներով բնակության թույլտվություն»՝ ինքնազբաղվածության նպատակին հասնելու համար, եթե համապատասխան քվոտայով տեղ կա: Երրորդ երկրի քաղաքացիներին կարող է շնորհվել կացության թույլտվություն՝ որպես ինքնազբաղվածների, եթե նրանք պայմանագրային հիմունքով կատարել են որևէ կոնկրետ աշխատանք, որը պետք է գերազանցի վեցամսյա ժամկետը և առկա է Աշխատուժի շուկայի ծառայության նահանգի լիազորված գրասենյակի փաստաթուղթը՝ հիշյալ գործունեությունը որպես ինքնազբաղվածություն որակավորելու մասին և

առկա է Ավստրիայի շահագրգռվածությունը՝ իր տնտեսական և աշխատուժի շուկայի քաղաքականության առումով խնդրո առարկա բիզնեսի կապակցությամբ: ԵՄ-ի տարածքում ազատ տեղաշարժի իրավունք ունեցող երրորդ երկրի քաղաքացիներին կարող են շնորհվել «սահմանափակումներով բնակության թույլտվություն» ինքնազբաղվածության նպատակին հետամուտ լինելու համար: Այս դրույթով օրենսդիրը նպատակ ունի ընդգրկել այն դեպքերը, որոնք կարգավորվում են ԵՀ-ի և որոշակի երրորդ երկրների միջեւ պայմանագրերով:

Սեզոնային աշխատանք

«Օտարերկրացի հպատակների մասին» օրենքի (NAG) համաձայն առկա է հատուկ ընթացակարգ կարճաժամկետ (սեզոնային աշխատողներ) աշխատող օտարերկրացու համար: Կացության այս կատեգորիան շատ կարևոր է տուրիզմի և գյուղատնտեսության համար: Այս դրույթների ընդգրկման դրդապատճառը այն է, որ հակառակ ազգային գործազրկության մակարդակների, այս ոլորտներում առկա է աշխատուժի մատակարարման կարիք: Խնդրո առարկա ներգաղթածները մշտական կացության կարգավիճակ ձեռք բերելու հնարավորություն չունեն:

Երրորդ երկրի քաղաքացիների այս խմբի համար տարեկան չափաբաժնի կանոնակարգում կարող է ընդգրկվել հատուկ քվոտա: Այս անձանց շնորհվում է «D+C» տիպի վիզա՝ FPG-ի Հոդված 24-ի համաձայն: Նահանգները իրավասու են առաջարկություններ կատարելու ժամանակավոր աշխատող օտարերկրացիների և բերքհավաք բանվորների ընդունման համար: Կացության իրավունք կամ բնակության ազատություն ունեցող օտարերկրացիներին պետք է վերաբերվել բարեհաճորեն: Նման հատուկ աշխատանքի թույլտվության երկարաձգումը հնարավոր է, բայց մեկ տարուց ավելի տևող զբաղվածության դեպքում նոր թույլտվությունը կարող է շնորհվել հին թույլտվության ավարտից միայն երկու ամիս անց: Նման թույլտվությունների առավելագույն տևողությունը 12 ամիս է՝ 14 ամիսների ընթացքում:

Բնակության թույլտվություն

- առանցքային անձի համար բնակության թույլտվություն (առաջին անգամ թույլտվություն շնորհելու դեպքում՝ մինչև 18 ամիս, ընդգրկում է որպես առանցքային անձ աշխատուժի շուկա մուտք գործելը)
- առանց սահմանափակումների բնակության թույլտվություն՝ ընդգրկում է ողջ աշխատուժի շուկա մուտք գործելը
- սահմանափակումներով բնակության թույլտվություն, օրինակ՝ ընտանիքի վերամիավորման դեպքում, թույլատրված ինքնազբաղվածության գործունեություն, այլ զբաղվածություն թույլատրվում է միայն ԶՊԾ-ի (Ավստրիայի զբաղվածության պետական ծառայություն) կողմից տրամադրված լրացուցիչ փաստաթղթի դեպքում:

«Մշտական կացություն՝ ECC »

Անընդմեջ բնակության 5 տարուց հետո, ընդգրկում է ողջ աշխատուժի շուկա մուտք գործելը:

Կացության թույլտվություն

- Հերթափոխով աշխատող բանվոր (անհրաժեշտ փաստաթուղթը տրամադրվում է ԶՊԾ-ի կողմից. որպես հերթափոխով աշխատող բանվորի երաշխավորված աշխատանքի կամ զբաղվածության թույլտվության հաստատում)
- Ձեռնարկության կողմից ուղարկված անձինք (անհրաժեշտ փաստաթուղթը տրամադրվում է ԶՊԾ-ի կողմից. որպես հերթափոխով աշխատող բանվորի երաշխավորված աշխատանքի կամ զբաղվածության թույլտվության հաստատում, զբաղվածություն ոչ ավելի, քան վեց ամիս)
- Ինքնազբաղված անձինք (եթե օտարերկրացին կատարում է որևէ մեկ որոշակի աշխատանք պայմանագրային հիմունքով և եթե նման գործունեությունը տևելու է ոչ ավելի, քան 6 ամիս, նման հարցով զբաղվում է ԶՊԾ)
- Արվեստագետները (ինքնազբաղված կամ աշխատող, աշխատանքը մեծամասամբ որոշվում է արվեստին առնչվող գործունեությամբ և սեփական ապրուստի միջոցները ծածկվում են դրանով, պարտավորության հայտարարություն չի ընդունվում,

զբաղվածության դեպքում անհրաժեշտ է ԶՊԾ-ի կողմից շնորհված հետևյալ փաստաթղթերից որևէ մեկը. որպես արվեստագետ երաշխավորված աշխատանքի կամ զբաղվածության թույլտվության հաստատում)

- Աշխատանքային գործունեության հատուկ դեպքեր (եթե գործունեությունը արտոնված է արտասահմանցիների զբաղվածության մասին օրենքով, անհրաժեշտ է արտոնության հանգամանքների ապացույց)
- Գիտաշխատողներ (հավաստագրված գիտական հաստատության կողմից ընդունելու մասին համաձայնագրի ներկայացման դեպքում)

Երկարաժամկետ կացության կարգավիճակ – EC (LTR EC)

Ավստրիայում առնվազն հինգ տարի օրինական կերպով և անընդմեջ բնակվող ներգաղթածները իրավասու են ստանալու անսահմանափակ «երկարաժամկետ կացության կարգավիճակ - ԵՀ»:

Ավստրիայում ընդհատումներով մնալու ժամանակաշրջանները ընդհանուր առմամբ պետք է չգերազանցեն տաս ամիսը կամ վեց ամիսը՝ անընդմեջ, ԵՄ այլ երկրներում մասնագիտական աշխատանքի պատճառով բացակայության ժամանակահատվածները բացասական ազդեցություն չեն գործում: Բացառիկ դեպքերում, ինչպիսիք են՝ լուրջ հիվանդության կամ սոցիալական կամ զինվորական պարտականություն կատարելու պատճառը, անձը կարող է լքել Ավստրիան մինչև 24 ամիս՝ առանց ունենալու ընդհատված ԵԿԿ ձեռք բերելու համար բնակության ժամանահատվածը, եթե այդ մասին տեղեկացվել է մարմնին և դա գրի է առնված (SRA-ի կետ 45):

<u>Երկարաժամկետ կացության կարգավիճակ ձեռք բերելու պահանջներ</u>

- Կայուն և բավարար եկամուտ. Կացությունը պետք է ֆինանսական բեռ չառաջացնի երկրի համար – ՆՈՐ է. սա այն դեպքն է, եթե օտարերկրացի հպատակը ունի որոշակի և կանոնավոր գումար, որը ապահովում է իր ապրուստը՝ առանց հիմնվելու սոցիալական օգնության դրամի վրա և այդ գումարը համապատասխանում է «Սոցիալական ապահովության մասին ընդհանուր օրենքով» սահմանված չափին (SRA-ի կետ 11, բաժին 4, ենթաբաժին 5):

- Ոեժի մեջ է մնում Առողջության վկայականի (ներդրվել է 2002 թվականի բարեփոխմամբ) ներկայացման պահանջը (SRA –ի կետ 11, բաժին 7):
- Պետական քաղաքականություն և պետական անվտանգություն (ՆՈՐ է) (SRA-ի կետ 11, բաժին 4, ենթաբաժին 2). օտարերկրացի հպատակի բնակությունը չպետք է հակասի պետական շահերին, ինչը այդպես է այն դեպքում, եթե օտարերկրացի հպատակը սերտ հարաբերություններ ունի ծայրահեղական կամ ահաբեկչական խմբի հետ և այս խմբի ծայրահեղ կամ ահաբեկչական գործողությունները գործող կառույցների կամ ապագա զարգացումների առնչությամբ կարող են չբացառվել:

6. Ապաստան

Ապաստանի ազգային քաղաքականության սեղմ շարադրանք

Ընդհանուր առմամբ, Ավստրիայում ապաստանի մասին ընթացակարգը բաղկացած է երկքայլ համակարգից. Ապաստանի ֆեդերալ գրասենյակից (Bundesasylamt), որպես առաջին ատյան և Ապաստանի համար անկախ ֆեդերալ սենատից (Unabhängiger Bundesasylsenat), որպես բողոքարկման ատյան: Ապաստանի հարցերով զբաղվող լիազոր նախարարությունը Ներքին գործերի նախարարությունն (ՆԳՆ) է: 2004 թ. «Ապաստանի մասին» օրենքով, ապաստանի համար դիմելու ընթացակարգը տարանջատվել է ապաստանի ընդունման և հիմնական ապաստանի ընթացակարգի, ի լրումն, ապաստանի համար դիմող անձանց խնամքի պատասխանատվությունը բաշխվել է Ավստրիայի ֆեդերալ իշխանության և նահանգների միջև:

Մուտք

Ընդունման ընթացակարգը պետք է տեղի ունենա նախնական ընդունման երեք կենտրոններից որևէ մեկում, որոնք կոչվում են «ԱՐԵՎԵԼՔ արևմուտք» (Traiskirchen), «ԱՐԵՎԵԼՔ արևելք» (Thalham) և «Օդանավակայան»: Եթե ընդունման ընթացակարգը դրական ելք է ունենում, ապա դիմող անձը անցնում է ապաստանի սովորական ընթացակարգով և սկսում է ենթարկվել «Ապաստանի համար դիմող անձանց ֆեդերալ խնամքի մասին» դրույթը կարգավորող ֆեդերալ

օրենքին: Դրա արդյունքում դիմող անձը մուտք է գործում խնամքի ֆեդերալ համակարգ, եթե հաստատվում է նրա այդ կարիքը:

Ավստրիայում մնալու ընթացքում

Ֆեդերալ խնամքի նախկին համակարգը փոխվել է Ավստրիայի ֆեդերալ իշխանության և նահանգների միջև ապաստանի համար դիմող անձանց հիմնական խնամքի մասին Հիմնական բարեկեցության աջակցության համաձայնագրով (Grundversorgungsvereinbarung): Դրանով ապաստանի համար դիմող անձանց համար ֆեդերալ իշխանության որոշ պատասխանատվությունը փոխանցվել է նահանգներին, դրանում ընդգրկելով օթևանի ծախսերը և կազմակերպումը: Հիմնական խնամքի այս համակարգը բաղկացած է օթևանից, սննդից, դրամից, մանր ծախսերի համար ամսական գումարից, բժշկական զննումից, բժշկական ապահովագրությունից, իրերից և աշակերտների համար տրանսպորտային ծախսերից և այլն:
Քանի որ ՆԳՆ-ի և ավստրիական ՀԿ-ների կոնսորսիումի միջև բանակցությունները ձախողվեցին, 2003 թ. կառավարությունը հրահանգեց «European Homecare» մասնավոր ընկերությանը աշխատացնել ֆեդերալ խնամքի կենտրոնները, աջակցել ապաստանի համար դիմող անձանց և տրամադրել վերադարձի հարցերով խորհրդատվություն:

Աշխատանք

Ավստրիան աշխատուժի շուկայի մուտքը մատչելի է դարձնում ապաստանի համար դիմող անձանց՝ ելնելով աշխատուժի շուկայի կարիքներից: Թեպետ ապաստանի համար դիմող անձինք իրավասու են ինքնազբաղվածության համար, դիմող անձնացից միայն քչերն են ստանում աշխատանքի թույլտվություն:

7. Ընտանիքի վերամիավորում

Բնակության թույլտվության համար կացության նպատակներից մեկը ընտանիքի վերամիավորումն է: Այն, սակայն, սահմանափակվում է քվոտայի համակարգով: Եթե նահանգում քվոտայով սահմանված տեղերի քանակը սպառվել է, ապա ընտանիքի վերամիավորման

դեպքերում համապատասխան մարմինը հետաձգում է որոշման կայացումը՝ մինչև տեղի հնարավորություն բացվելը, պայմանով, որ խնդրո առարկա դիմումը չի կարող մերժվել կամ չընդունվել այլ պատճառներով: Ընտանիքի վերամիավորումների դիմումը ընդունելուց երեք տարի անց դիմումների լրացուցիչ հետաձգումները թույլատրելի չեն և չափաբաժնի մասին պահանջը այլևս չի կիրառվում: Եռամյա ժամկետի սահմանափակումը չի ներառում բոլոր տեսակի ընտանիքի վերամիավորումները, այլ միայն «սահմանափակումներով բնակության թույլտվություն» ունեցող ազգականներին:

Ֆեդերալ կառավարությանը թույլատրված է մատնանշել ընտանիքի այն անդամների կատեգորիաները, որոնց հետ երրորդ երկրի քաղաքացիների վերամիավորումը հնարավոր է արտոնյալ հիմքով՝ նկատի առնելով նրանց հիմնականում ինտեգրված լինելու հանգամանքը: Հետևաբար, քվոտայի համակարգում նրանց տրվում է արտոնյալ ռեժիմ:

«Ընտանիքի անդամ» եզրը սահմանվում է որպես «Ամուսին/կին կամ չամուսնացած անչափահաս երեխաներ, ներառյալ որդեգրված կամ խորթ երեխաները: Ամուսինները/կանայք (բացառությամբ Ավստրիայի քաղաքացի ամուսիններից/կանանցից, ԵՏԳ քաղաքացիներից և Շվեդիայի քաղաքացիներից) պետք է լինեն առնվազն տասնութ տարեկան: Բազմակնության ժամանակ, երբ երաշխավորը արդեն ունի իր հետ բնակվող կին ֆեդերալ տարածքում, այլ կնոջ կացության իրավունքի հարցը բացառված է»:

Երրորդ երկրի քաղաքացի հանդիսացող ընտանիքի անդամներին շնորհվում է «սահմանափակումներով կացության թույլտվություն», եթե քվոտայի համակարգում տեղ կա, և երաշխավորը ունի համապատասխան դրույթում թվարկված երկարաժամկետ կացության իրավունքներից որևէ մեկը: Մեկ տարի անց, նրանք ունեն առանց սահմանափակումների կացության թույլտվության իրավունք, որը նրանց իրավունք է տալիս ազատ մուտք գործել աշխատուժի շուկա:

Ընտանիքի վերամիավորում երրորդ երկրի երաշխավորողների հետ

«Ընտանքի անդամ» կացության թույլտվությունը («Familienangehöriger») վերաբերում է երրորդ երկրների այն քաղաքացիներին, ովքեր.

- Ավստրիայի կամ ԵՄ/ԵՏԳ քաղաքացիների ընտանիքի անդամներն են (ամուսիններ/կանայք, չամուսնացած երեխաներ),
- մտադիր են միավորել իրենց ընտանիքները,
- մշտապես բնակվում են Ավստրիայում և
- ԵՄ տարածքում ազատ տեղաշարժի իրավասու չեն:

Ովքեր են իրավասու այս տեսակի ընտանիքի վերամիավորման համար

- 18 տարեկան դարձած ամուսինները/կանայք և
- անչափահաս և չամուսնացած երեխաները, ներառյալ մինչև 18 տարեկան որդեգրված և խորթ երեխաները, մինչև 15 տարեկանների համար դիմում ներկայացնելու պահանջ այլևս չկա:

Պահանջներ

- Սոցիալական ապահովության մակարդակից բարձր եկամտի մակարդակ,
- Համապատասխան կացարանի օրինական իրավունք,
- Առողջության վկայական,
- 2002 թվականի բարեփոխմամբ ներդրված «ինտեգրման համաձայնագրի» ստորագրում և
- Քրեական անցյալի բացակայություն:

Դիմումների համար պատասխանատու մարմիններ

Ավստրիայի ներկայացուցչություններ արտասահմանում՝ դեսպանատուն կամ հյուպատոսություն

Կացության թույլտվությունների շնորհում

Մշտական կացության քարտի համար դիմեք Ձեր բնակության վայրի Ավստրիական Օտարերկրացիների գրասենյակներ: Ավստրիայի կամ ԵՄ/ԵՏԳ քաղաքացու կացության վայրի հարցով պատասխանատու

Օտարերկրացիների տեղական գրասենյակը (Fremdenbehörde) կարող է լինել կամ.

- Նահանգի ղեկավարը (Landeshauptmann) կամ
- Նահանգի ղեկավարի կողմից լիազորված վարչական տարածքի մարմինը (Bezirksverwaltungsbehörde):

8. Առողջապահական համակարգ

Այց բժշկին

Ընդհանրապես, Ձեզ անհրաժեշտ չէ նախօրոք վճարել: Եթե Դուք ուսանող եք կամ աշխատում եք լրիվ դրույքով Ավստրիայում, Դուք պետք է ձեռք բերեք որևէ **ապահովագրության հավաստագիր**: Սովորաբար հնարավոր է օգտվել դեպոզիտից, եթե Դուք հրատապ բուժօգնության կարիք ունեք:

Եթե Դուք ունեք ճամփորդության կամ առողջապահության անհատական ապահովագրություն, ապա վճարում եք բանկային փոխանցման միջոցով: Այնուհետև, սովորաբար ստանում եք փոխհատուցում Ձեր ապահովագրության ընկերության կողմից (պահպանեք անդորրագիրը): Ոչ բոլոր բուժումներն են ծածկվում պետական կամ անհատական ապահովագրություններով: Ճշտեք այդ հարցը բժշկի և/կամ ապահովագրության ընկերության հետ:

Միջին հաշվով ամսական 67 եվրո վճարումը ապահովագրված անձի կամ նրա խնամարկյալների համար համապարփակ ծածկում է թերապևտիկ, հիվանդանոցային խնամքը և այլն:

Անհետաձգելի բժշկական **օգնության համար զանգեք 144:**

Հիվանդանոց

Եթե Դուք ուսանում կամ ապրում եք Ավստրիայում, ապա հիվանդանոցային բուժումը **անվճար է, բացառությամբ այսպես կոչվող «համավճարի» փոքր վճարումից՝ Ձեր ապահովագրությունից կախված:**

Նախքան Ավստրիա ճամփորդելը, Ձեր ապահովագրության ընկերության հետ ճշտեք, թե որ բուժումները և անհետաձգելի դեպքերն են ծածկվում ապահովագրությամբ: Հիվանդանոցները և թերապևտները սովորաբար կրեդիտ քարտեր չեն ընդունում:

Հավելյալ մանրամասներ

Վիեննայի բժշկական ասոցիացիայի Օտարերկրյա պատենտների ծառայությունը (Ärztekammer für Wien) կարող է տեղեկություններ տրամադրել Վիեննայում բժշկական ծառայությունների մասին, ներառյալ տեղեկություններ վարչական տարածքում անգլերեն խոսող բժիշկների մասին: Հետագա տեղեկությունների համար, այցելեք նրանց վեբկայքը կամ զանգեք Օտարերկրյա պատենտների ծառայություն: http://www.aekwien.at/980.html

Վիեննա քաղաքի խորհրդի վեբկայքը ունի Վիեննայում բժիշկներ ու դեղատներ փնտրելու հնարավորություն՝ «Gesundheit»/«Ärzteinnen und Ärzte»/«Wiener Ärzt»/innen» խորագրի ներքո: Որոնման այս հնարավորությունը մատչելի է նաև անգլերենով՝ http://www.wien.gv.at/

9. Սոցիալական ապահովագրության համակարգ

Ավստրիայում **սոցիալական ապահովությունը տարածվում է այն աշխատողների վրա, ում ամսական եկամուտը գերազանցում է 333.16 եվրոյի սահմանը:** Համապատասխան սոցիալական ապահովության հաստատությունում գրանցումը պարտադիր է. յուրաքանչյուր անձ վճարում է սոցիալական ապահովության վճարումներ:

Գրանցում

Գործատուները պատասխանատու են իրենց աշխատողներին համապատասխան սոցիալական ապահովության հաստատությունում գրանցելու համար:

Գրանցման ժամանակ յուրաքանչյուր անձի տրվում է սոցիալական համար:

Վճարումներ

Աշխատողների սոցիալական ապահովության վճարումները կիսվում են գործատուների ու աշխատողների միջև, այս վճարումները ավտոմատ կերպով պահվում են աշխատավարձերից: Սոցիալական ապահովության վճարումների չափը կախված է աշխատանքի բնույթից՝ արդյոք

աշխատողը կատարում է մտավոր, թե ֆիզիկական աշխատանք, սկսնակ է, թե ոչ, նվազագույն եկամուտ ստացող աշխատող է, թե ոչ:

Հատուկ կանոնակարգեր ուսանողների և ցածր եկամուտ ունեցող աշխատողների համար

Այն աշխատողների, որոնց վարձատրությունը ավելի ցածր է, քան ցածր եկամտի սահմանը, ինչպես նաև ուսանողների համար սոցիալական ապահովության համակարգը **գործում է միայն մասնակիորեն** (դժբախտ պատահարների ապահովագրություն): Այն աշխատողները, ում եկամուտը ցածր է եկամտի սահմանից, իրավասու են առողջության և/կամ կենսաթոշակային կամավոր ապահովագրության համար:

Նպաստներ

(1) Առողջության ապահովագրություն, ներառյալ հղիությունը (պրոֆիլակտիկ խնամք և մայրական խնամք). ընտանիքի անդամների ավտոմատ և ազատ ապահովագրություն (որոշակի նախապայմանների դեպքում) և երեխայի խնամքի նպաստ: Այն ծածկում է հետևյալը. բժիշկների ու ատամնաբույժերի բուժումներ, դեղամիջոցներ, տնային պայմաններում տրամադրվող բուժօգնություն, հոգեբուժություն, կլինիկական հոգեխանգարումների բուժում, վերականգնողական բժշկական ծառայություններ, էրգոթերապիա, հիվանդությունների նպաստ, փոխհատուցում (օրինակ՝ ընտրված բժշկի) և ծախսերի դիմաց վճարումներ (օրինակ՝ արհեստական ատամներ)

Հավելյալ մանրամասները՝ http://www.sozialversicherung.at

(2) Դժբախտ պատահարների ապահովագրություն. պաշտպանություն դժբախտ պատահարներից աշխատանքի վայրում ու մասնագիտական հիվանդություններից և դրանց հետևանքներից, օրինակ՝ անաշխատունակություն և մասնագիտական անկարողություն և այլն:

Հավելյալ մանրամասները՝ http://www.auva.at և http://www.sozialversicherung.at (դժբախտ պատահարների ապահովագրություն)

(3) Կենսաթոշակային ապահովագրություն: Իրավասության պահանջներ.

- Թոշակային տարիքի հասնելը

- Վճարումների ժամանակաշրջաններ.

  _ նվազագույնը 180 վճարում/ամիս, այսինքն՝ վճարումների 15 տարի, որում հաշվի կառնվեն մինչև 2005 թվականի հունվարի 1-ը երեխայի խնամքի ժամանակաշրջանները

  _ և դրանում նվազագույնը 84 վճարում/ամիս, այսինքն՝ աշխատանքի 7 տարի
- Բացի տարիքային թոշակից, գոյություն ունեն հետևյալ տեսակի թոշակներ.

  _ վաղ ծերության թոշակ՝ երկարաժամկետ ապահովագրության համար

  _ աստիճանական ծերության թոշակ

  _ծանր աշխատանքի թոշակ (2007թ.-ի հունվարի 1-ից)

  _ միջանկյալ նպաստ

  _ մասնագիտական անգործունակություն, անկարողություն և աշխատանքային հաշմանդամություն թոշակ

  _ ողջ մնացած խնամարկյալների թոշակ

(4) Գործազրկության ապահովագրություն. սրանք օրինակ՝ գործազրկության նպաստների վճարումներն են, սոցիալական ապահովությունը, հատուկ սոցիալական ապահովությունը, թոշակների կանխավճարները:

Ավստրիայի զբաղվածության ծառայությունը (ԱԶԾ/AMS) պատասխանատու է Ավստրիայում գործազրկության ապահովագրության նպաստների համար:

Գործազրկության նպաստի հայցերը կարող են ներկայացվել միայն անձնապես՝ վարչական տարածքի լիազոր մարմնին: Եթե Դուք դարձել եք գործազուրկ, ապա պետք է հնարավորին չափ արագ կապվեք Ձեր վարչական տարածքի լիազոր մարմնի հետ՝ Ձեր գործազրկության նպաստները ստանալու հարցը կարգավորելու համար:

Գործազրկության նպաստի ստացումը հնարավոր է, եթե բավարարվել է որակավորման ժամանակաշրջանը (Anwartschaft).

- գործազուրկը վերջին 12 ամիսների ընթացքում աշխատել է առնվազն 26 շաբաթ (վերաբերում է այն անձանց, ովքեր չեն բոլորել 25 տարին) կամ

- գործազուրկը վերջին 24 ամիսների ընթացքում աշխատել է առնվազն 52 շաբաթ (վերաբերում է այն անձանց, ովքեր նախնական հայցի ժամանակ բոլորել են 25 տարին) կամ
- գործազուրկը վերջին մեկ տարվա ընթացքում աշխատել է առնվազն 28 շաբաթ (վերաբերում է լրացուցիչ հայցերին)

Ընդհանուր առմամբ, գործազրկության նպաստները կարելի է ստանալ մինչև 20 շաբաթ: Որոշակի պայմանների դեպքում այն կարող է երկարել մինչև 30 շաբաթ: Ավելի հին աշխատողները, ում աշխատանքային փորձը ավելի մեծ է և գտնվում են կրկին աշխատելու սխեմայում, կարող են գործազրկության նպաստներ ստանալ մինչև երեք-չորս տարի:
Գործազրկության նպաստի ստացման ընթացքում Դուք և Ձեր ընտանիքի անդամները շարունակում եք օգտվել առողջապահության ապահովագրությունից:
Հավելյալ մանրամասները՝ http://www.ams.at (Ֆինանսական հարցեր)

(5) Սոցիալական ապահովության նպաստներ

- Պետական օգնություն վարչական տարածքից (Sozialhilfe)
- Անձնական խնամք և երկարաժամկետ բուժման ապահովություն (Pflegevorsorge and Pflegeversicherung)

Իրավասության պահանջներ
Եթե գործազրկության նպաստների կամ երեխայի խնամքի համար փոխհատուցումներ ստանալու իրավունքները սպառվել են և Դուք շարունակում եք մնալ գործազուրկ, ապա սոցիալական ապահովության նպաստը կարելի է հայցել, եթե.

- աշխատանք որոնողը գտնվում է զբաղվածության ծառայության տրամադրության տակ, և մասնավորապես կարող է և ցանկանում է աշխատել և գործազուրկ է
- դիմող անձը ֆինանսական ծանր վիճակում է:

Սոցիալական ապահովության նպաստները շնորհելուց առաջ ուսումնասիրվում է դիմող անձի և նրա զուգընկերոջ ֆինանսական վիճակը: Եթե զուգընկերոջ եկամուտը գերազանցում է որոշակի գումարը, ապա սոցիալական ապահովություն չի շնորհվում:

10. Քաղաքացիության/հպատակության ձեռքբերում

Ավստրիայի քաղաքացիություն կարելի է ձեռք բերել ծագման հիման վրա կամ տրամադրելու միջոցով (և տրամադրումը երկարացնելու միջոցով)

(1) Ծագման հիման վրա նշանակում է, որ ամուսնությունից ծնված երեխան ծնվելիս ավտոմատ կերպով դառնում է քաղաքացի, եթե ծնողներից մեկը Ավստրիայի քաղաքացի է կամ քաղաքացի էր այդ ժամանակ կամ իրենց մահվան ժամանակ: Ապօրինի երեխաները ավտոմատ կերպով ձեռք են բերում քաղաքացիություն, եթե նրանց ծննդյան ժամանակ նրանց մայրը Ավստրիայի քաղաքացի է՝ առանց հաշվի առնելու, թե որն է երեխայի ծննդավայրը կամ ապօրինի հոր քաղաքացիությունը:

(2) Տրամադրելու միջոցով ձեռքբերումը վերաբերում է հատկապես այն օտարերկրացիներին, ովքեր հաստատվել են Ավստրիայում (նվազագույնը 10 տարի օրինական և անընդմեջ բնակություն, որոնցից նվազագույնը 5 տարի պետք է լինի բնակության թույլտվությամբ) և այժմ ցանկանում են ամբողջովին ինտեգրվել հասարակության մեջ: Օտարերկրացիներին քաղաքացիության տրամադրումը կարող է նաև, որոշակի պայմանների դեպքում, տարածվել ցանկացած անչափահաս չամուսնացած երեխաների վրա:

Վերոհիշյալի և «Քաղաքացիության մասին» օրենքով Ավստրիայի քաղաքացիության ձեռքբերման հետագա հնարավորությունների մասին ավելի ստույգ տեղեկատվությունը մատչելի է Ձեր հիմնական բնակության [Hauptwohnsitz] նահանգի կառավարչի գրասենյակի քաղաքացիության վարչությունում՝

[Amt der Landesregierung]

http://www.help.gv.at/linkhelp/besucher/db/lnkaufl.suchen?label=Staatsbuergerlandesreg&system=Prod uktionssystem

Պատասխանատու մարմինը՝ քաղաքացիության տրամադրման ընթացակարգը իրականացվում է վարչական տարածքի կառավարչի գրասենյակում (Amt der Landesregierung):

Ընդհանուր պահանջներ

Ընդհանուր նախապայմաններ

- Ոչ մի դատապարտում դատարանի կողմից, ոչ մի առկախ վարույթ Ավստրիայում կամ արտասահմանում, ոչ մի խոշոր վարչական զանցանք
- Կացության թույլտվությունը անցյալում երբևէ չեղյալ չի հայտարարվել, չկա Ավստրիայում կամ ԵՏԳ երկրում մնալու դիմող անձի իրավունքի դադարեցման որևէ առկախ վարույթ, վերջին տասներկու ամիսների ընթացքում արտաքսումը չեղյալ չի հայտարարվել
- Դրական վերաբերմունք Ավստրիայի Հանրապետության նկատմամբ
- Գոյատևման բավարար միջոցներ
- Հրաժարում նախկին քաղաքացիությունից (պայմանով, որ հրաժարումը հնարավոր է և կարող է ողջամիտ կերպով ակնկալվել դիմող անձից)
- Ավստրիայի ու Վիեննայի ժողովրդավարական համակարգի ու պատմության իմացություն
- Գերմաներեն լեզվի տիրապետման ապացույց
- Դիմող անձը պետք է ունեցած լինի իր անընդմեջ հիմնական բնակավայրը (կենսական շահերի ու հարաբերությունների կենտրոն) այստեղ՝ անմիջապես Ավստրիայի քաղաքացիություն ձեռք բերելուց առաջ

Խնդրում ենք ուշադրություն դարձնել, որ Ավստրիայի քաղաքացիություն ձեռք բերելու մի քանի տարբեր ձևերից բոլորն էլ կապված են հատուկ պահանջների կամ պայմանների հետ:

Հպատակագրման հատուկ պահանջներ

Քաղաքացիություն ձեռք բերելու օրինական հայց ունեցող անձինք պետք է բավարարեն նաև հպատակագրության ընդհանուր պահանջներին: Ստորև ներկայացված պայմանները բավարարող անձինք ունեն քաղաքացիության իրավական պահանջ.

- երեսուն տարի անընդմեջ հիմնական բնակություն, կամ
- տասնհինգ տարի օրինական կամ անընդմեջ բնակություն՝ անձնական ու մասնագիտական կայուն ինտեգրման ապացույց, կամ
- հիմնական բնակության վեց տարի՝ պայմանով, որ դիմող անձը հինգ տարի ամուսնացած է Ավստրիայի քաղաքացու հետ և հինգ տարի

ամուսինը/կինը կիսում է տնային տնտեսությունը դիմող անձի հետ, կամ

- վեց տարի օրինական և անընդմեջ բնակություն և ապաստանի պաշտոնական իրավունք, կամ
- վեց տարի օրինական և անընդմեջ բնակություն՝ պայմանով, որ դիմող անձը ունի որևե ԵՏԳ անդամ երկրի քաղաքացիություն, կամ
- վեց տարի օրինական և անընդմեջ բնակություն՝ պայմանով, որ դիմող անձը ծնվել է Ավստրիայում, կամ
- վեց տարի օրինական և անընդմեջ բնակություն, եթե դիմող անձը հպատակագրվում է գիտության, բիզնեսի, արվեստի ու մշակույթի կամ սպորտի ոլորտներում նախկին կամ ապագա արտակարգ ձեռքբերումների հիմքերով:

<u>Պահանջվող փաստաթղթեր</u>

Ստորև ներկայացված ցուցակը միայն ընդհանուր հղումների համար է: Առանձին դիմումների համար պահանջվող փաստաթղթերը գնահատվում են անհատական հարցազրույցների ժամանակ՝ հիմնվելով դիմող անձի անձնական տվյալների վրա:

Եթե ներկայացվող փաստաթղթերը գերմաներենով չեն, ապա պետք է ներկայացնել հավաստագրված (դատական) թարգմանչի կողմից գերմաներեն թարգմանությամբ: Ցանկացած դատապարտում կամ դատարանի կարգադրագրեր (ներառյալ արտասահմանյանները), ի լրումն թարգմանության, պահանջում են անվիճարկելիության հավաստագիր:

- Դիմումի ձևաթուղթ՝ անհատ դիմող անձանց ու մինչև երեք երեխա ունեցող ընտանիքների համար (ստանդարտ ձևաթուղթ բոլոր ֆեդերալ նահանգների համար)
- Դիմումի հետ միասին ներկայացվող փաստաթղթեր (Վիեննայի համար պահանջվում են հատուկ փաստաթղթեր)
- Ձևաթղթեր անչափահասների համար
- 13 և ավելի բարձր տարիքի համար. համապարփակ ինքնակենսագրություն, որում մասնավորապես ընդգրկված են բնակության վայրերը՝ ծնված օրվանից ի վեր, դպրոցական կրթությունը, մասնագիտական վերապատրաստումը և առաջընթացը, ինչպես նաև անձնական պայմանները
- անձնագրի չափսի լուսանկար

- քաղաքացիական կարգավիճակի մասին փաստաթղթեր (ծննդյան վկայական, ամուսնության վկայական, ամուսնու/կնոջ մահվան վկայական, եթե կա այդպիսին, ամուսնալուծության անբեկանելի որոշումներ, նախկին ամուսնությունների ապացույց)
- ապացույց արտերկրում կամ երկրում ձեռքբերված գիտական կոչումի մասին
- քաղաքացիության ապացույց (վավեր անձնագիր, քաղաքացիության հավաստագիր), բացառությամբ Ժնևի փախստականների կոնվենցիայով կամ Ավստրիայի ապաստանի մասին օրենքով (Asylgesetz) փախստական ճանաչվածների համար
- ապացույց Ավստրիայում բնակության մասին. ամենավերջին գրանցումը, իդենտիֆիկացիոն քարտ ունեցողների համար՝ Արտաքին գործերի ֆեդերալ նախարարության կողմից տրված Ավստրիայում գրանցման մասին ապացույց
- ապացույց վերջին երեք տարիների ընթացքում ապահով եկամտի մասին
- ապացույց մինչ տվյալ պահը Ավստրիայում ապահովագրության ժամանակահատվածների մասին
- ապացույց անչափահասների իրավական ներկայացուցչության մասին (ծնողների ամուսնալուծությունից հետո), դատարանի որոշումը իրավական ներկայացուցչության մասին
- ապացույց, որ դիմող անձը կատարում է գերմաներենի իմացության մասին պահանջները՝ «Ինտեգրման համաձայնագրի» մոդուլ 2-ի հոդված 14/5/2-5 և Ավստրիայի արտասահմանցիների կացության և բնակության մասին օրենքի համաձայն (Niederlassungs- und Aufenthaltsgesetz - NAG):

Միգրանտներին աջակցություն տրամադրող կազմակերպություններ

Ավստրիայի Հանրապետություն
Հայաստանի Հանրապետության դեսպանատուն
պրն. Աշոտ Հովակիմյան՝ արտակարգ և լիազոր դեսպան
Hadikgasse 28, A-1140, Vienna, Austria
Tel.: (43 1) 5227479 (43 1) 5243668 (հյուպատոսական բաժին)
Fax: (43 1) 5227481
E-mail: armenia@armembassy.at

Գերմանիայի Դաշնային Հանրապետություն
(BUNDESREPUBLIK DEUTSCHLAND)
Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանատուն
29, Charents Street
Tel: 523279, 524581, 586591
Fax: 524781
E-Mail: info@eriw.diplo.de
Internet: www.eriwan.diplo.de
Բացվել է 1992 թ. հոկտեմբերի 13-ին

Ավստրիայի արտաքին գործերի նախարարություն (BMEIA)
Եվրոպական և միջազգային գործերի դաշնային նախարարություն
Minoritenplatz 8
A-1014 Wien
Tel.: +43 (0) 50 11 50 -0
Fax: +43 (0) 50 11 59 -0
Web: http://www.bmeia.gv.at/index.php?id=8&L=1

հասարակական ծառայությունների ներքին հեռախոսահամարներ՝
Սպասարկման բաժին՝ 4411
Անձնագրերի և վիզաների բաժին՝ 3900
Իրավա-հյուպատոսական բաժին՝ 4411
Տեղեկատու՝ 4411

Օգնություն կառավարությանը
Կառավարական գործակալության օգնության վեբկայք՝
http://www.help.gv.at/
Ավստրիայում ապրելու և աշխատելու համար անհրաժեշտ տեղեկություն (անգլերեն և գերմաներեն)

Ներքին գործերի դաշնային նախարարություն
Herrengasse 7
A-1014 Vienna
Tel.: ++43-(0)1/531-26-0
Email: oeffentlichkeitsarbeit@bmi.gv.at
http://www.bmi.gv.at/asylwesen/

Քաղաքապետարանի ներգաղթի, քաղաքացիության և հաշվառման գրասենյակներ
Քաղաքապետարանի բաժին թիվ 35 (Վիեննա)
Dresdner Str. 91,
Block C
1200 Vienna
Phone: (+43 1) 4000-8020
Fax: (+43 1) 4000 9935010
E-Mail: post@m35.magwien.gv.at
Web:http://www.wien.gv.at/english/administration/civilstatus/index.html

Ապաստանի և օտարերկրացի հպատակների համակարգի տեղեկատվական կենտրոն՝ ապաստանի և ինտեգրման հարցերով
Bräunerstraße 5
A-1014 Vienna
Tel.: ++43-(0)1/53126-5224; -5223
Web: http://www.bmi.gv.at/fremdenwesen

Գիտության և հետազոտության դաշնային նախարարություն
www.bmwf.gv.at/
Bundesministerium für Wissenschaft und Forschung
Minoritenplatz 5
1014 Wien
Tel.:+43 (0)1 531 20 DW (0)

Telefax:+43 (0)1 53120-9099
infoservice@bmwf.gv.at

Սոցիալական հարցերի և սպառողների պաշտպանության դաշնային նախարարություն՝ BMSG
Stubenring 1
A-1010 Vienna
Tel: +43 1 711 00-0
Fax: +43 1 533 78 71
քաղաքացիների սպասարկում՝ +43 1 711 00 -4266
սոցիալական հարցերով թեժ գիծ՝ 0800/20 16 11
E-mail: buergerservice@bmsg.gv.at
WEB: http://www.bmsg.gv.at

Վիեննայի շրջանային առողջության ապահովագրության ֆոնդ (Gebietskrankenkasse)
Wienerbergstraße 15-19
A-1100 Vienna
Tel: +43 1 601 22-0
Fax: +43 1 602 46 13
Web: http://www.wgkk.at

Կենսաթոշակների ապահովագրության հաստատություն (Pensionsversicherungsanstalt)
Friedrich Hillegeist-Straße 1
A-1021 Vienna
Tel: +43 (0) 50 303-0
Fax: +43 (0) 50 303-28850
e-mail: pva@pva.sozvers.at
Web: http://www.pensionsversicherung.at

Ավստրիայի և Վիեննայի միջազգային կազմակերպությունների Հատուկ առաքելություն
Nibelungengasse 13/4
1010 Vienna - Austria
Tel: +43 1 585 33 22
Fax: +43 1 585 33 22-30

Email: ncpaustria@iom.int
Web: http://www.iomvienna.at

Բնակպայմանների ասոցիացիա կացարանների ատլաս (Ներքին Ավստրիա)
http://www.wohnnet.at/atlas

Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ) Ավստրիայում
Nibelungengasse 13/4
A-1010 Vienna, Austria
Tel: +43.1 585 33 22
Fax: +43.1 585 33 22 30

Փախստականների հարցերով ՄԱԿ-ի գրասենյակ (UNHCR) Ավստրիայում
Postfach 550
A-1400 Vienna
Tel. +43-(0)1-26060-4048
Fax +43-(0)1-2633748
Email: ausvi@unhcr.ch
Web: http://www.unhcr.at

ՄԱԿ-ի տեղեկատվական ծառայություն (UNIS)
Վիեննայի միջազգային կենտրոն
Wagramer Strasse 5
A-1400 Wien
Tel: (+43-1) 26060-4666
Fax: (+43-1) 26060-5899
Web: http://www.unis.unvienna.org/unis/

Ժողովուրդների օգնության կազմակերպություն (Volkshilfe)
Web: http://www.volkshilfe.at/

«Օգնող ձեռքեր»
Web: http://www.helpinghands.at/
Tel.: +43-1-310 88 80 DW 10

Ապաստանի համակարգման ավստրիական կենտրոն
Laudongasse 52/9; A-1080 Vienna
Tel.: 01 53 212 91
Ապաստանի հարցերով զբաղվող ՀԿ-ների ներքո աշխատող խմբեր
Fax: 01 53 212 91 - 20
E-mail: asylkoordination@asyl.at
Web: http://www.asyl.at/kontakt/kontakt.htm

Եվրոպական տուն
Otto-Glöckel-Straße 24; A-2514 Traiskirchen
Tel: +43-(0)2252 / 508919 –26
Fax: +43-(0)2252 / 508919 –69
Email: presse-at@eu-homecare.com
Web: http://www.euhomecare.com/at/index.htm
Աջակցություն և խորհրդատվություն ապաստան որոնողների համար

SOS մարդ-արարածներին (SOS Mitmensch)
Postfach 220; A-1070 Vienna
Tel.: ++43-(0)1/524 9900,
Fax: ++43-(0)1/524 9900-9
Email: office@sosmitmensch.at
Web: http://www.sosmitmensch.at
Աջակցություն և խորհրդատվություն ապաստան որոնողներին, փախստականներին, միգրանտներին և խոցելի խմբերին

Մարդու իրավունքների ավստրիական ասոցիացիա
Postfach 69; A-1095 Vienna
Tel.: ++43-(664) 3003224
Fax: ++43-(0)1/4090480-2
Email: wien@verein-menschenrechte.at
Web: http://verein-menschenrechte.at
Աջակցություն և խորհրդատվություն ապաստան որոնողներին, փախստականներին, միգրանտներին և խոցելի խմբերին

Ավստրիական Կարիտաս
Albrechtskreithgasse 19-21
A-1160 Vienna

Tel.: 01/48831-435 oder 0664/82 66 906
Fax: 01/480 45 83
Web: http://www.caritas.at

Ավետարանչական դիակոնիա
Albert Schweitzer Haus Schwarzspanierstraße13
1090, Wien
Tel: +43 1 409 80 01
Fax: +43 1 409 80 01 20
E-Mail: diakonie@diakonie.at
Web: http://www.diakonie.at/

Ավստրիական Կարմիր Խաչ
Österreichisches Rotes Kreuz
Wiedner Hauptstrsse 32
A-1040 Wien, AUSTRIA
Tel: 01 58900 0
Web: http://www.roteskreuz.at/

Վիեննայի ավստրիական արհմիությունների ֆեդերացիա (AK)
Prinz-Eugen-Straße 20-22
A-1040 Vienna
Tel: +43 1 50 165-0
Fax: +43 1 50 165-2230
E-mail: akmailbox@akwien.at
Internet: http://wien.arbeiterkammer.at

Ներքին Ավստրիայի ավստրիական արհմիությունների ֆեդերացիա (ÖGB)
Windmühlgasse 28
A-1060 Vienna
Tel: +43 1 586 21 54
Fax: +43 1 586 21 54-1566
E-mail: niederoesterreich@oegb.or.at
Internet: http://www.oegb.at